ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2004 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 Իրականացված քաղաքականության հիմնական ուղղությունները…… 3

1.1. Գործունեության հիմնական ամփոփ արդյունքները……. 4

2 2004թ. կատարված հիմնական աշխատանքները……. 4

2.1. Օրենսդրական ոլորտ և զարգացման ծրագրերի մշակում……..…… 4

2.2. Առևտրի ոլորտ…… 7

2.3. Ներդրումային ոլորտ……. 8

2.4. Գիտական և տեխնոլոգիական զարգացման ոլորտ…….. 10

2.5. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ……. 11

2.6. Արդյունաբերական ոլորտ……. 13

2.7. Ռազմաարդյունաբերական և տնտեսության զորահավաքային նախապատրաստության ոլորտ……... 17

2.8. Արտաքին տնտեսական քաղաքականության և արտաքին տնտեսական համագործակցության ոլորտ……... 18

2.9. ԱՀԿ և ԵՄ հետ համագործակցություն…….. 20

2.10. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտ…….. 22

2.11. Զբոսաշրջության ոլորտ……... 23

2.12. Մտավոր սեփականության պահպանության ոլորտ……. 25

2.13. Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման ոլորտ……..……... 26

2.14. Որակի վերահսկողություն…….. 29

2.15. Տնտեսության մեջ աշխատանքների անվտանգ կազմակերպման հսկողություն…… 29

Հավելված 1. Համառոտ տվյալներ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համակարգի 2004թ. ֆինանսատնտեսական գործունեության մասին…… 31

Հավելված 2. Նախարարության փաստաթղթաշրջանառությունը……..…… 32

Հավելված 3. Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության 2005 թվականի միջոցառումների ցանկ……..……. 33

1. Իրականացված քաղաքականության հիմնական ուղղությունները

2004 թվականին ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գործունեության համար հիմք են հանդիսացել ՀՀ նախագահի հրամանագրերը, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումները, ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը և դրա իրագործումն ապահովող միջոցառումները, ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի՝ ՀՀ կառավարության ուղերձի հիմնադրույթները:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված քաղաքականությունը հիմնականում նպատակաուղղված է եղել՝

- հանրապետության տնտեսության կայուն զարգացմանը նպաստող միջավայրի հետագա բարելավմանը, տնտեսական ակտիվության անընդհատ աճի ապահովմանը՝ տնտեսական ազատական քաղաքականությունից շեղումների բացառման պայմաններում,
- տնտեսության մրցունակության շարունակական բարձրացմանը՝ համեմատական առավելությունների առավելագույն իրացմանը զուգահեռ մրցակցային առավելությունների զարգացման միջոցով,
- մարդկային և ֆինանսական ռեսուրսների առավելագույն կենտրոնացմանը գիտական ներուժի ընդլայնման և տնտեսության մեջ նորամուծությունների արդյունավետ կիրառման ապահովման նպատակով,
- տնտեսության մեջ ներդրումների ծավալների (այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի) ավելացման ապահովմանը հատկապես արտահանման կողմնորոշում ունեցող և բարձր ավելացված արժեք ստեղծող ճյուղերում,
- ձեռնարկատիրության (հատկապես փոքր և միջին) զարգացման համար նպաստավոր գործարար միջավայրի շարունակական բարելավմանը, վարչարարական խոչընդոտների վերացմանը,
- ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ տեմպերի ապահովմանը՝ արտահանման կառուցվածքում գիտատար ապրանքատեսակների մասնաբաժնի մեծացմամբ,
- տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման համաչափության ապահովմանը,
- շուկայական ենթակառուցվածքների զարգացմանը,
- Հայաստանի Հանրապետության տնտեսությունը համաշխարհային տնտեսությանն արդյունավետ ինտեգրման ապահովմանը:

1.1. Գործունեության հիմնական ամփոփ արդյունքները

2004թ. գործունեության հիմնական ամփոփ արդյունքները եղել են.

1. Համախառն ներքին արդյունքը կազմել է 1893.6 մլրդ դրամ՝ ապահովելով 10.1% աճ:
2. Հայաստանի, որպես ազատական տնտեսությամբ երկրի, վարկանիշի բարձրացումը 42-րդ տեղ:
3. ՓՄՁ ոլորտի մասնակցությունը ՀՆԱ-ում կազմել է շուրջ 40%:
4. Արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 2066.0 մլն ԱՄՆ դոլար, աճի տեմպը՝ 105.1%, իսկ առանց ադամանդի՝ 116.2% : Ընդ որում, արտահանման ծավալը կազմել է 715 մլն ԱՄՆ դոլար, աճի տեմպը՝ 104.3%, առանց ադամանդի՝ 493.4 մլն ԱՄՆ դոլար, աճի տեմպը՝ 124.1% :
5. Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը հասել է 270 հազարի՝ նախորդ տարվա համեմատ ապահովելով ավելի քան 31% հավելաճ:
6. Տարվա կտրվածքով սպասվող օտարերկրյա ներդրումների ծավալը կկազմի ավելի քան 250 մլն դոլար: 2003թ. 9 ամիսների համեմատությամբ 2004թ. նույն ժամանակահատվածում օտարերկրյա ընդամենը ներդրումների ծավալն աճել է 4,9%-ով, իսկ ուղղակի ներդրումների ծավալը նվազել է 2,1%-ով:
7. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում արտադրության ծավալը գնահատվել է շուրջ 55-60 մլն ԱՄՆ դոլար (աճը՝ 12 %) որից մոտ 98% արտահանվել է: ՀՆԱ-ում ոլորտի բաժինը կազմել է 1,7 %:

2. 2003թ. կատարված հիմնական աշխատանքները

2.1. Օրենսդրական ոլորտ և զարգացման ծրագրերի մշակում

<u>Օրենսդրական ոլորտ</u>

ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են Նախարարության կողմից մշակված հետևյալ օրենքները՝

- «Առևտրի և ծառայությունների մասին»,
- ««Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին»,
- «Համապատասխանության գնահատման մասին»,
- «Չափումների միասնականության ապահովման մասին»,
- «Արտոնագրերի մասին»,

- «Ապրանքների և ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին»,
- «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»
- «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին»,
- ««Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին»,
- ««Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին»,
- ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»
- ««Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
- ««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին»
- «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» :

Մշակվել և սահմանված կարգով քննարկման փուլում են գտնվում ՀՀ օրենքների հետևյալ նախագծերը՝

- «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին»,
- «Ներդրումների մասին»,
- ««Առևտրաարդյունաբերական պալատների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»(ՀՀ կառավարության կողմից ուղարկվել է ՀՀ ԱԺ):

ՀՀ կառավարության 2004 թվականի աշխատանքային ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկով Նախարարությանը վերապահված 32 միջոցառումներն իրականացվել են սահմանված ժամկետներում և ամբողջությամբ:

2004թ. ընթացքում մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել վերը նշված օրենքների կիրարկման ապահովմանն ուղղված որոշումների և այլ իրավական ակտերի նախագծեր: Մասնավորապես ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ կառավարության որոշման 96 և ՀՀ վարչապետի որոշման 30 նախագծեր:

<u>Ծրագրերի մշակում</u>

Երկրի երկարաժամկետ զարգացման ռազմավարությունն ամրագրելու նպատակով 2004թ. Նախարարությունը մշակել և ՀՀ կառավարություն է ներկայացրել հետևյալ ծրագրային փաստաթղթերի նախագծերը `

- ՀՀ կայուն տնտեսական զարգացման ռազմավարություն,
- ՀՀ տարածքային տնտեսական զարգացման ռազմավարություն,
- Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնոլոգիաների զարգացման հայեցակարգ,
- ՀՀ-ում ինովացիոն գործունեության հայեցակարգ:

Մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են

- Տնտեսության մեջ տեխնիկական անվտանգության ապահովման և պետական կարգավորման իրականացման հայեցակարգը,
- ՀՀ ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման բնագավառներում օրենսդրական դաշտի կատարելագործման հայեցակարգը:
- Մշակվել է ՀՀ-ում արհեստագործության զարգացման հայեցակարգը, որը նախատեսվում է իրականացնել 2 փուլով՝ ոլորտը կարգավորող իրավական փաթեթի ստեղծում և պետական աջակցության ենթակառուցվածքների ստեղծում:

Նախարարությունն իր իրավասությունների շրջանակներում մասնակցել է ՀՀ մարզերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ծրագրերի մշակմանն ու դրանց իրականացմանը: Մասնավորապես շարունակում է մասնակցել ՀՀ Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի, ինչպես նաև Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակմանը:

Շարունակվել են աշխատանքները նախորդ տարիներին մշակված և ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ մարզերի զարգացման հիմնախնդիրների լուծման միջոցառումների ծրագրի իրականացման ուղղությամբ:

Տնտեսական զարգացման ծրագրերի և տնտեսական քաղաքականության մշակման ու ճշգրտման տեղեկատվական ապահովման նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- իրականացվել է ոլորտներում գործող 202 ընկերությունների գործունեության հիմնական արտադրական ցուցանիշների ամսական վարչական մոնիտորինգ,
- կատարվել են տնտեսության առանձին ոլորտների զարգացման միտումների ուսումնասիրություններ, առաջարկություններ են ներկայացվել ՀՀ նախարարություններ և այլ գերատեսչություններ:

Իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության տարեկան բյուջեի կազմման և բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման ապահովման նպատակով Նախարարությունը նախապատրաստել է 2005թ. ՀՀ պետական բյուջեի ուղերձի նախագծում ընդգրկված «ՀՀ տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները» հատվածը և 2005 – 2007թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի նախագծի վերաբերյալ առաջարկությունները:

Նախապատրաստվել և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն են ներկայացվել 9 ընկերությունների, 2 անավարտ շինարարության օբյեկտների և 2 արտադրական տեղամասերի գույքի գնահատման ելակետային տվյալների փաթեթներ:

Իրականացվել է Նախարարության համակարգի ընկերությունների և ձեռնարկությունների ցանկերի ճշգրտում, մասնավորեցման մասին ՀՀ կառավարության տարբեր որոշումներով մասնավորեցվող ընկերությունների կազմից առանձնացված ստորաբաժանումների գույքագրում:

2.2. Առևտրի ոլորտ

Նախարարության կողմից 2004թ. կատարված աշխատանքներն ուղղված են եղել ոլորտը կարգավորող իրավական դաշտի ձևավորմանը և կատարելագործմանը, գործարարների համար հավասար մրցակցային դաշտի ապահովմանը, միջազգային շուկաներում հայրենական ապրանքարտադրողների շահերի պահպանմանը:

<u>Սպառողական շուկա և ծառայություններ.</u> ՀՀ ներքին շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը կազմել է 1085595.9 մլն դրամ, աճի տեմպը՝ 117,1%, այդ թվում՝ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը՝ 849553.4 մլն դրամ, աճի տեմպը՝ 119.6%, իսկ ծառայությունների ծավալը՝ 236042.5 մլն դրամ, աճի տեմպը՝ 108.9%:

Նախարարության կողմից 2004թ. առավել ուշադրություն է դարձվել ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի ձևավորման և կատարելագործման խնդիրներին: Մասնավորապես, ընդունվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվել են ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները, նրանց գործունեության նկատմամբ վերահսկողության սկզբունքները, կարգավորվել են վաճառող (մատակարար) – սպառող (գնորդ) շղթայի իրավահարաբերությունները: Ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման նպատակով մշակվել են նաև ««Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Սպառողների իրավունքների պաշտպանության մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Առևտրաարդյունաբերական պալատների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Արտաքին առևտուր: ՀՀ արտաքին առևտուրը պահպանել է աճի տեմպերը ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման մասով: Արտահանման միջին աճի տեմպը կազմել է 105.4%, իսկ ներմուծմանը՝ 106.4%:

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 2066.0 մլն. դոլար, այդ թվում՝ արտահանումը՝ 715.0 մլն դոլար, ներմուծումը՝ 351.0 մլն դոլար: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 636.0 մլն դոլարով:

ՀՀ արտաքին առևտրի տարիֆային կարգավորման բնագավառում Նախարարությունը մասնակցել է «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքով հաստատված ցանկում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքներին: Օրենքի նախագիծը մշակվել է ներքին շուկայի համամասնությունների, ներքին շուկայի գների վրա ներմուծման և արտահանման ծավալների ազդեցության գծով կատարված ուսումնասիրությունների արդյունքում՝ պահպանելով ՀՀ կողմից ստանձնած պարտավորությունները:

Իրականացված միջոցառումների հիմնական նպատակն է եղել աջակցել հայրենական ապրանք արտադրողներին որոշ գործընկեր պետություններ հայկական ապրանքների ներմուծման ժամանակ սակագնային և ոչ սակագնային լծակների մեղմացման հարցում: Այդ ուղղությամբ հաշվի առնելով ՌԴ՝ արտահանման տարողունակ շուկա լինելու հանգամանքը, փոփոխություն է առաջարկվել ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրում:

2.3. Ներդրումային ոլորտ

Նախարարության կողմից իրականացվող ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված էր գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացմանը, ինչպես նաև վերոհիշյալ նպատակների իրագործմանը նպաստող շուկայական ենթակառուցվածքի զարգացմանը:

Իրականացված ներդրումային քաղաքականության արդյունքում 2004թ. 9 ամիսների ընթացքում օտարերկրյա ներդրումների ծավալը կազմել է 175,5 մլն դոլար, որից ուղղակի ներդրումները՝ 114,9 մլն դոլար, տարվա կտրվածքով սպասվող օտարերկրյա ներդրումների ծավալը կկազմի ավելի քան 250 մլն դոլար: 2003թ. 9 ամիսների համեմատությամբ 2004թ. նույն ժամանակահատվածում օտարերկրյա ընդամենը ներդրումների ծավալն աճել է 4,9%-ով, իսկ ուղղակի ներդրումների ծավալը նվազել է 2,1%-ով:

2004թ. հունվար-սեպտեմբերին ուղղակի ներդրումների 54,6%-ը կամ 64 մլն դոլարը կազմել են կազմակերպությունների սեփականաշնորհումից ստացված միջոցները: Առանց սեփականաշնորհման միջոցների, իրական հատվածում կատարված օտարերկրյա ընդհանուր ներդրումների ծավալը 2003թ. հունվար-սեպտեմբերի համեմատությամբ աճել է 69,9%-ով, իսկ ուղղակի ներդրումներինը՝ 2,2 անգամ:

Մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունումը նպատակ ունի նպաստել տեղական և օտարերկրյա ներդրողների գործունեության համար հավասար, կայուն և կանխատեսելի ներդրումային օրենսդրության և գործարար միջավայրի ձևավորմանը:

2004թ. ընթացքում աշխատանքներ են տարվել ներդրումային զգալի ներուժ ունեցող հիմնական գործընկեր երկրների հետ իրավապայմանագրային դաշտի ձևավորման ուղղությամբ, մասնավորապես շարունակվել են բանակցությունները «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» միջկառավարական Համաձայնագրերի ստորագրման հարցի շուրջ: Ստորագրվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջև ներդրումների փոխադարձ խրախուսման և պաշտպանության մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆինլանդիայի Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և պաշտպանության մասին» Համաձայնագրերը: Բանակցային փուլում է գտնվում 22 համաձայնագրերի կնքման գործընթացը: Ստորագրման են նախապատրաստված 2 Համաձայնագիր (Նիդերլանդների Թագավորություն, Իսպանիայի Թագավորություն):

ՀՀ կառավարության միջնորդությամբ, Համաշխարհային Բանկի և Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (ՄՖԿ) համատեղ կառույց հանդիսացող Օտարերկրյա Ներդրումների Խորհրդատվական Ծառայության հետ համատեղ ավարտվեց «Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության իրականացման վարչական ընթացակարգերի գնահատում» հետազոտության իրականացումը: Հետազոտության արդյունքում կազմվել է գործարար միջավայրի բարելավմանն ուղղված Միջոցառումների ժամանակացույցի նախագիծ, որը շահագրգիռ գերատեսչությունների հետ քննարկումից հետո կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

Իրականացվել են նպատակաուղղված աշխատանքներ համապատասխան կազմակերպությունների կողմից հրապարակվող վարկանիշային կամ վերլուծական գնահատականների հրապարակումներում ճշգրտումներ իրականացնելու ուղղությամբ:

Աշխատանքներ են իրականացվել Պետերբուրգյան 8-րդ Միջազգային Տնտեսական Համաժողովին հայկական կողմի մասնակցության ապահովման նպատակով, իսկ համաժողովի շրջանակներում անցկացված «ԱՊՀ Երկրները և Ռուսաստանի Դաշնային

Շրջանները» ցուցահանդեսին առանձին տաղավարով ներկայացված էր նաև Հայաստանը: Նախարարության կողմից իրականացված ընդհանուր համակարգմամբ աշխատանքների շնորհիվ ցուցահանդեսին մասնակցեցին 13 հայկական ընկերություններ, որոնց օժանդակություն ցուցաբերվեց «Զարգացման Հայկական Գործակալություն» ՓԲԸ-ի կողմից:

2004թ. հունիսի 22-24-ը ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանի՝ ԳԴՀ աշխատանքային այցի շրջանակներում կազմակերպվեց «Հայ-Գերմանական տնտեսական համագործակցության օր» խորագրով գործարար համաժողովը:

Համաժողովի ընթացքում կազմակերպվեց նաև հայկական ընկերությունների մասնակցությամբ ցուցահանդես, որին մասնակցեցին շուրջ 15 հայկական ընկերություններ:

2.4. Գիտական և տեխնոլոգիական զարգացման ոլորտ

Նախարարության համակարգի գիտության ոլորտը ներկայացնող կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների ծավալը կազմել է ավելի քան 950.0 մլն դրամ: Ֆինանսավորում ստացվել է ինչպես բյուջետային, այնպես էլ այլ աղբյուրներից, այդ թվում՝ միջազգային դրամաշնորհներից և պատվերներից, հաջողությամբ շարունակվել է համագործակցությունը միջազգային գիտական կենտրոնների հետ:

Մասնավորապես, Երևանի ֆիզիկայի ինստիտուտը Գերմանական էլեկտրոնային սինքրոտրոն (DESY) խոշորագույն կենտրոնի հետ կնքել է համագործակցության վերաբերյալ 60 000 եվրոյի պայմանագիր, որը հնարավորություն է տվել ստեղծել նոր, բարձր վարձատրվող մոտ 40 աշխատատեղեր: Հաջողությամբ իրականացվում է CERN–ի (Շվեյցարիա) մեծ հադրոնային արագացուցչի (LHC) վրա կատարվող ATLAS գիտափորձի համար անհրաժեշտ ճառագայթային վահանի ձուլման պատվերը:

«Գալակտիկա» ԲԲԸ-ում ավարտին է հասցվել 600 մմ տրամագծով սֆերիկ հայելիների արտադրության գերմանական պատվերի կատարումը:

«Պլաստպոլիմեր ԳՀԻ» ՓԲԸ կողմից մշակվել և հավանության են արժանացել Բուդյոնովսկում (ՌԴ) վինիլացետատի արտադրության տեխնիկատնտեսական փաստաթղթերը, նախապատրաստվում է ռուսաստանյան ԼուկՕյլ նավթային ընկերության հետ համագործակցության ընդլայնման պայմանագիր:

Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներում նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցելու նպատակով «Անդրոն» կոմպլեքսային էլեկտրասարքավորումների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ հիման վրա կազմակերպվել է տեխնոպարկ, որտեղ արդեն գործում են գիտատար արտադրությամբ զբաղվող 7 ձեռնարկություններ:

ՀՀ կառավարություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության հայեցակարգը: Հայեցակարգի նպատակը երկրի կայուն և անվտանգ զարգացումն ու մրցունակությունը, բարենպաստ ինովացիոն միջավայր ապահովող, համաշխարհային տնտեսական համակարգում գրավչություն ունեցող ինովացիոն ազգային համակարգի հետևողական ձևավորման համար անհրաժեշտ ամենակարևոր տարրերի և ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանն ուղղված քաղաքականության մոտեցումների և սկզբունքների ամրագրումն է:

2.5. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ

Հաշվետու ժամանակաշրջանում SS ոլորտում զարգացման տեմպերը ընդհանուր առմամբ պահպանվել են: Առաջատար ընկերությունների մեծ մասն ընդլայնել են արտադրության և ծառայությունների ծավալը: Ոլորտում ակտիվ աշխատում են շուրջ 120 ձեռնարկություններ, աշխատատեղերի քանակը աճել է շուրջ 200-ով, արտադրության ծավալը գնահատվում է շուրջ 55-60 մլն դոլար (աճի տեմպը՝ 112%), որից մոտ 98% արտահանվում է: ՀՆԱ-ում SS ոլորտի բաժինը կազմում է 1,7%:

Նախարարության կողմից իրականացվել են մի շարք ծրագրեր՝ ուղղված արտահանման խթանմանը: Մասնավորապես, կազմակերպվել է հայաստանյան SS ձեռնարկությունների մասնակցությունը «CeBIT 2004» (Գերմանիա), ինչպես նաև Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցած միջազգային ցուցահանդեսներին, «EuroIndia 2004» տեղեկատվական հասարակության համաժողովին:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» Հիմնադրամի գործունեության շրջանակներում նոր գործարար կապեր հաստատելու, նոր շուկաներ ուսումնասիրելու և արտասահմանյան գործընկերների հետ համատեղ ծրագրեր նախաձեռնելու նպատակով՝ հայկական ընկերությունների սեփականատերեր, ղեկավարներ և առաջատար մասնագետներ գործուղվել են արտասահմանյան ընկերություններ, մասնավորապես ԱՄՆ և Արևմտյան Եվրոպա:

Ստեղծվել է SiliconArmenia ինտերնետային պորտալը՝ որպես Հայաստանի բարձր տեխնոլոգիաների և ՏՀՏ ոլորտի գլխավոր պորտալ:

Նախարարության և «Ալկատել» ընկերության միջև հանդիպման ընթացքում քննարկվել է Ալկատելի և իր գործընկերների կողմից Հայաստանում ներդրումներ կատարելու հնարավորության հարցը, այդ թվում՝ Ալկատելի Ռադիոհաճախային իդենտիֆիկացիայի սարքավորումների Գերազանցության կենտրոնի ստեղծումը:

Նախարարության նախաձեռնությամբ ընդունվել «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքը:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» Հիմնադրամի գործունեության շրջանակներում իրականացվել են կրթական և վերապատրաստման մի շարք ծրագրեր, որոնք վերաբերում են նյութի մատուցման և ներկայացման հմտություններին, վաճառքի իրականացմանը և բանակցությունների վարմանը, ֆինանսական վերլուծությանը, բիզնես ծրագիր կազմելու հմտություններին, SS ծրագրերի կառավարմանը: Անցկացվել են ուսումնական դասընթացներ տեխնիկական թեմաներով (Linux, Microsoft ցանցի անվտանգություն, MySQL, Java):

Ոլորտում նկատվում է ծրագրային արտադրանքից (Software) դեպի մեքենայական մասի (Hardware) արտադրության անցում կատարելու միտում: Առաջին անգամ Հայաստանում համակարգիչների արտադրությունը արհեստանոցային հավաքումից անցնում է հարահոսային արտադրության («Տեղեկատվական տեխնոլոգիաների Կենտրոն» (CIT), օրական 60 հատ): «UNICOMP» ՍՊԸ-ն առաջինը տարածաշրջանում իրականացրել է INTEL Itanium 2 բազայի հիման վրա հիմնված սերվերների և INTEL CENTRINO տեխնոլոգիայի հիման վրա հիմնված նոութբուքերի արտադրություն և վաճառք: «Տրանզիստոր պլյուս» ընկերությունում սկսվել է ադամանդների պարամետրերի չափման և տեսակավորման թվածրագրային ավտոմատ համակարգի մշակումը:

Նախարարության աջակցությամբ «EXPOMEDIA» ցուցահանդեսների նախագծման կենտրոնը կազմակերպել է 4-րդ մասնագիտացված ԻՆՖՈՏԵԿ ցուցահանդեսը, որի շրջանակներում նաև կայացավ բիզնես-ֆորում «SS-ն կորպորատիվ ընկերությունների համար» թեմայով, որի նպատակն էր SS-ի ինտեգրումը արդյունաբերության մյուս ճյուղերի հետ:

Հայաստանի և Հնդկաստանի միջև համաձայնություն է ձեռք բերվել հնդկական կողմի ֆինանսական աջակցությամբ Երևանում հիմնադրել SS ուսումնական կենտրոն, որը եզակի կլինի տարածաշրջանում:

Էլեկտրոնային նախագծման տեխնոլոգիաների բնագավառի համաշխարհային առաջատար «Սինոպսիս» բաժնետիրական ընկերության անվան տակ են միավորվել տեղական «Լեդա դիզայն» և «Մոնթերեյ» ընկերությունների կոլեկտիվները և ակտիվները, որը «Սինոպսիսի» կողմից Հայաստանի SS ոլորտում իրականացվելիք ծրագրերից դեռևս առաջինն է:

Կազմակերպվել է Համահայկական ծրագրավորման մրցույթ, որի հիմնական նպատակն էր բացահայտել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի երիտասարդ մասնագետների պրոֆեսիոնալիզմի աստիճանն ու վերապատրաստման և ուսուցման հետագա պահանջները:

Կազմակերպվել է Համահայկական ամառային դպրոց: Ամառային դասընթացները թույլ տվեցին Հայաստանի և Սփյուռքի երիտասարդ մասնագետներին մեկ թիմի կազմում

սովորելու և աշխատելու, ինչը կապերի հաստատման, փորձի ու գիտելիքների փոխանակման բացառիկ հնարավորություն դարձավ:

Կայացավ «Բաց աղբյուր» միջազգային սեմինար, որը թույլ տվեց բացահայտել զարգացման այս մոդելի կենսունակությունը:

Անցկացվեց համաժողով՝ նվիրված ոլորտում օտարերկրյա ներդրումներ ներգրավելուն, որը «Ձեռնարկությունների ինկուբատոր» Հիմնադրամի կողմից նախաձեռնված Ձեռնարկատիրության խթանման դրամաշնորհի մրցույթի եզրափակիչ փուլի ամփոփիչ միջոցառում էր:

2.6. Արդյունաբերական ոլորտ

Հաշվետու ժամանակաշրջանում արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 530.2 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 102.1%: Արդյունաբերական արտադրանքի ծավալն առանց ադամանդի կազմել 521.4 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 107.0%, ինչը վկայում է արդյունաբերության այլ ճյուղերում գրանցված որոշակի դրական աճի մասին:

<u>Մեքենաշինական արդյունաբերություն:</u> Ճյուղի ընկերությունների կողմից թողարկվել է 6,19 մլրդ դրամի ապրանքային արտադրանք, նախորդ տարվա 5,87 մլրդ դրամի դիմաց, աճի տեմպը՝ 105,4%:

Արտադրանքի իրացումը կազմել է 6,75 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 115 %, որից արտահանվել է 3,57 մլրդ դրամի արտադրանք, աճի տեմպը՝ 138,6%: Արտահանվող արտադրանքի ավելի քան 80%-ն իրացվել է ԱՊՀ երկրներում: 2004թ. արտադրա-տնտեսական ցուցանիշների աճ է արձանագրվել ճյուղի այնպիսի ընկերություններում, ինչպիսիք են Վանաձորի «Ավտոգեն-Մ» ՍՊԸ (193%), «Սևանի կատարող սարքերի գործարան» ԲԲԸ (269.8%), «Արմավիրի հաստոցաշինական գործարան» ԲԲԸ (263%), Չարենցավանի «Արմավտո» ԲԲԸ (126%), Կապանի «Մեքենաշինական գործարան» ԲԲԸ (172%):

2004թ. ոլորտում փաստացի աշխատել են 5168 մարդ, նախորդ տարվա 5100-ի դիմաց, 22,7%-ով աճել է նաև միջին աշխատավարձը՝ 33,5 հազ.դրամ, նախորդ տարվա 27,3 հազ դրամի դիմաց:

<u>Քիմիական արդյունաբերություն:</u> «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ թողարկել է 5.7 մլրդ դրամի արտադրանք՝ նախորդ տարվա նկատմամբ ապահովելով 211.6% աճ, իրացումը կազմել է 5.55 մլրդ դրամ, աճը՝ 211.0%, իսկ արտահանումը՝ 4.1 մլրդ դրամ, աճը՝ 330.0%:

«Ջեներալ Տրանսուորլդ» ՄՔ ՓԲԸ թողարկել է 216.8 մլն դրամի արտադրանք՝ նախորդ տարվա նկատմամբ ապահովելով 161.7% աճ, իրացումը կազմել է 203.7 մլն դրամ, նախորդ

տարվա նկատմամբ՝ 188.8%, արտահանումը՝ 28.4 մլն դրամ, նախորդ տարվա նկատմամբ՝ 345.9%:

Նախարարության միջնորդությամբ բանակցություններ են վարվել «Պրոմեթեյ-Խիմպրոմ» ՓԲԸ և սլովակյան «Դիվիդենտ Գրուպ» հոլդինգի ղեկավարության հետ, որի արդյունքում կնքվել է համատեղ գործունեության համաձայնագիր, որի համաձայն սլավոնական «Դիվիդենտ Գրուպ» հոլդինգի կողմից նախատեսված է իրականացնել Վանաձորի «Պրոմեթեյ-Խիմպրոմ» ՓԲԸ վերագործարկումը:

Քիմիական արդյունաբերության ճյուղի մոնիտորինգի ենթարկված 23 ընկերություններից աշխատել են 15-ը՝ թողարկելով մոտ 9,3 մլրդ դրամի արտադրանք (աճի տեմպը 157,1%): Իրացման ծավալը կազմել է 9.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ ապահովելով 166,8% աճ, ընդ որում արտահանումը կազմել է մոտ 4.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 1.8 մլրդ դրամի դիմաց:

<u>Թեթև արդյունաբերություն:</u> Ճյուղում գործող ձեռնարկությունները թողարկել են 12.0 մլրդ դրամի արտադրանք՝ ապահովելով 125.3% աճ, իրացման ծավալի աճը՝ 127.0%, արտահանման աճը՝ 134.6%: Արտադրանքի ծավալները զգալիորեն ավելացրել են Երևանի «Արմեն-Կարպետ» ԲԲԸ՝ անցյալ տարվա համեմատ 55%-ով, Երևանի տրիկոտաժի «Տոսպ» ԲԲԸ՝ 3 անգամ, «Նուբարաշենի տրիկոտաժի ֆաբրիկա» ԲԲԸ՝ 2 անգամ, Գյումրու «Արշալույս» ԲԲԸ՝ 57.3 %-ով, Չարենցավանի «Հոլանի» ԲԲԸ՝ 29.0%-ով և այլն: Աշխատողների թիվը կազմել է 7102 մարդ:

Մշակվել և առաջարկություններ են ներկայացվել Չինաստանի և ՌԴ համապատասխան շահագրգիռ ֆիրմաների հետ բանակցությունների ընթացքում բամբակի, կաշվի, տեքստիլ և բնական մետաքսի արտադրության ոլորտներում համատեղ ձեռնարկություններ հիմնադրելու նպատակով:

<u>Փայտամշակման արդյունաբերություն:</u> Ճյուղում գործում են միայն մասնավոր ընկերություններ, որոնցից մոնիտորինգի ենթարկվածներն ապահովել են առաջանցիկ տեմպերով աճ: Ընդհանուր ապրանքային արտադրանքի աճի տեմպը կազմել է 110.3%, իրացումը՝ 109.3%: Համեմատաբար բարձր ցուցանիշներ են ապահովել «Դպրոցական կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ՝ 241.1%, «Երևան-Կահույք» ԲԲԸ՝ 120.2%, Մասիսի «Գորֆրոտարա» ԲԲԸ՝ 117.9%, իսկ իրացումը կազմել է համապատասխանաբար 280.5%, 123.0% և 114.9%:

<u>Ակնագործություն և ոսկեգործություն</u>: 2004թ. ընթացքում թողարկվել է 117.5 մլրդ դրամի արտադրանք, ընդ որում իրացվել է 116.9 մլրդ դրամի, արտահանվել՝ 115.8 մլրդ դրամի: Այս ցուցանիշների նվազումը (20%-ով) 2003թ. նկատմամբ հիմնականում պայմանավորվել է հայկական դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի նվազմամբ: Ճյուղում զբաղված են ավելի քան 4000 մարդ, որոնց միջին աշխատավարձը կազմել է 90 հազար դրամ:

Մշակվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 23-ի N505-ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունումը կնպաստի «Քիմբերլի գործընթացի» հավաստագրման ծրագրի պահանջների իրականացման արդյունավետության բարձրացմանը ՀՀ տարածքում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 2002-2006 թվականներին Հայաստանի Հանրապետություն չմշակված բնական ալմաստներ մատակարարելու մասին» միջկառավարական համաձայնագիրը 2004թ. գործեց անարդյունավետ: Նախատեսված 400.0 հազ. կարատ ոսկերչական նշանակության ալմաստի հումքից հայկական կողմի ընկերություններին վաճառվել է շուրջ 130.0 հազ. կարատ, իսկ ոսկերչական նշանակության համար ոչ պիտանի (տեխնիկական նշանակության) ալմաստի հումք ընդհանրապես չի մատակարարվել: Ստեղծված իրավիճակը հիմնականում պայմանավորված է Համաձայնագրով ռուսական կողմի մատակարար հանդիսացող «Ալռոսա» ԲԸ գնային տնտեսական քաղաքականության փոփոխություններով: Նախարարությունը Համաձայնագրում փոփոխություններ կատարելու նպատակով բանակցություններ է վարել ռուսական կողմի հետ: Մշակվել է Համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին արձանագրության նախագիծը՝ հիմնական նպատակ ունենալով բարձրացնել Համաձայնագրի կատարման արդյունավետությունը:

Նախարարությունը Անտվերպենում (Բելգիա) կայացած «Diamantclub»-ի միջոցառման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերել 2004թ. հոկտեմբերին Հռոմում կայանալիք «Հայ Ոսկերիչների Միության» հերթական համաժողովը անցկացնել Հայաստանի Հանրապետությունում, սակայն ՀՈՄ-ում կազմակերպչական խնդիրների առաջացման պատճառով այն հետաձգվել է 2005թ.:

Մասնակցություն է ցուցաբերվել Օտտավայում (Կանադա) կայացած «Քիմբերլի Գործընթացի» պլենար նիստին, որի ընթացքում ներկայացվել է ՀՀ 2003թ. «Քիմբերլի Գործընթացի Մասնակցության Ծրագրի» տարեկան հաշվետվությունը և բավարար գնահատականի արժանացել:

Կազմակերպվեց “Ոսկեգործություն և ակնագործություն-2004” միջազգային ցուցահանդեսը, որին իրենց մասնակցությունը ցուցաբերեցին ոչ միայն հայկական, այլև արտասահմանյան մի շարք հայտնի ընկերություններ: 2004թ. ապահովվեց նաև ակնագործության և ոսկեգործության ոլորտի հայկական ձեռնարկությունների մասնակցությունը արտերկրում կազմակերպված մի շարք կարևոր միջազգային ցուցահանդեսներին:

<u>Հանքարդյունաբերություն, մետաղագործություն և շինանյութերի արտադրություն:</u> 2004թ. հանքարդյունաբերության ճյուղում թողարկվել է 163.6 մլրդ դրամի ապրանքային արտադրանք՝ նախորդ տարվա 153.4 մլրդ դրամի դիմաց: Թողարկվող ապրանքային

արտադրանքի ծավալը ավելացել է 6%-ով, արտադրանքի իրացումը կազմել է 162.8 մլրդ դրամ, նախորդի 90.1 մլրդ դրամի դիմաց, հավելաճը՝ 80.6%:

Ճյուղի ընկերություններում փաստացի աշխատողների թիվը կազմել է 10142 հոգի՝ 78000 դրամ միջին աշխատավարձով:

Կազմակերպվել է «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ի մասնավորեցման գործընթացը, որի արդյունքում 2004թ. մարտի 11-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի բաժնետոմսերը փոխանցելու մասին» որոշումը: Պարբերաբար իրականացվել է ամերիկյան «Comsup» ընկերության կողմից «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի վաճառքի և ներդրումների իրականացման մասին» պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն:

2004թ. մարտի 17-ին Լոնդոնում AMA-ի (Association of Mining Annalists) և OSCE-ի (Organisation for Security and Cooperation in Europe) հովանու ներքո կազմակերպվել է սեմինար -շնորհանդես՝ նվիրված ՀՀ հանքարդյունաբերության ոլորտին:

Լեռնահանքային համալիրում առանձնապես կարևորվում է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ բաժնետոմսերի մասնավորեցումը գերմանական և հայկական ընկերություններին 132 մլն դոլարով: 2004թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին» որոշումը, որի համաձայն գնորդները պարտավորվել են 2005-2012 թթ. ընթացքում կատարել 150-200 մլն դոլարի ներդրումներ՝ ձեռնարկության հումքային բազայի վրա հիմնված ժամանակակից տեխնոլոգիաների և սարքավորումների կիրառմամբ էկոլոգիապես մաքուր արտադրություն ստեղծելու նպատակով:

Արտադրական ծավալների ցուցանիշների բարելավման տեսակետից առանձնանում են «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ (125.0 %), «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ (140.0 %), «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ (409.0 %), «ACP» ՓԲԸ (143.0 %), «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ (121.0 %), «Զուլակենտրոն» ԲԲԸ (123.0 %)

Սկսվել է մոլիբդենի օքսիդի և ֆերոմոլիբդենի արտադրությունը «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ-ում, գազերից ռենիումի կորզումը «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ում, արտադրության վերազինումը «Ռուսալ-Արմենալ» և «Ասկե-Գրուպ» ընկերություններում:

Աճ է գրանցվել նաև շինանյութերի, մասնավորապես ցեմենտի արտադրության բնագավառում:

2.7. Ռազմաարդյունաբերական և տնտեսության զորահավաքային նախապատրաստության ոլորտ

Ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում գործող կազմակերպությունների ապրանքային արտադրանքի ծավալները 2003թ. նկատմամբ աճել են 10%-ով և կազմել են 803.3 մլն. դրամ: Հատկապես աճ է գրանցվել «Էլեկտրոն», «Գառնի – Լեռ» ԳԱՄ » և «ԵրՄՄԳՀԻ » և «Արիակ» ընկերություններում:

Նախորդ տարվա համեմատ աճել են նաև արտահանման ծավալները և կազմել 111 %: Միջին ամսական աշխատավարձը նախորդ տարվա համեմատ աճել է 8,5 %-ով և կազմել 40,8 հազ. դրամ:

Նախարարությանը վերապահված իրավասությունների մասով ապահովվել է «Հայաստանի Հանրապետության 2004թ. զենքի, ռազմամթերքի և ռազմական տեխնիկայի ներհանրապետական արտադրանքի գնումների պետական պատվերի մասին» ՀՀ կառավարության որոշման կատարումը և դրա նկատմանբ վերահսկողությունը:

Նախապատրաստվել է «Վերահսկվող ապրանքների անկախ մասնագիտական փորձաքննության անցկացման կարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը / ՀՀ կառավարության 20.05.2004 թ. N 765-Ն որոշում/:

Նախապատրաստվել են ««Ռաստր» գործարան» ԲԲԸ–ին ցիանական կալիում, ցիանական նատրիում, ցիանական պղինձ ներմուծելու թույլտվություն տալու մասին», ««Կոմպոզիցիոն նյութերի գործարան» ՓԲԸ–ին արդյունաբերական պայթուցիկ նյութ ՀՀ ներմուծելու թույլտվություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

Նախարարությունը մասնակցել է ««Զենքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Արդյունագործական նշանակության պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքերի շրջանառության մասին», ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի, «Վաճառված /փոխանցված/ և ձեռք բերված «Իգլա» և «Ստրելա» տիպի շարժական զենիթահրթիռային համալիրների վերաբերյալ ԱՊՀ մասնակից պետությունների միջև օպերատիվ տեղեկատվության փոխանակման կարգի մասին» համաձայնագրի նախագծի, «1992թ. մայիսի 15-ի Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին համաձայնագրի իրականացման միջոցառումների վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման նախագծերի մշակման աշխատանքներին:

Կատարվել են աշխատանքներ ոլորտի և համակարգի կազմակերպությունների՝ արտաքին տնտեսական կապերի ստեղծման և ընդլայնման ուղղությամբ, մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության հետ:

Համակարգվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված պետական վարկերի գծով պարտքի մարման համար Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող գույքը Ռուսաստանի Դաշնությանը փոխանցելու վերաբերյալ» Համաձայնագրի և դրան կից արձանագրությունների հանձնարարականների կատարման աշխատանքները:

ԱՊՀ անդամ–պետությունների ռազմատնտեսական համագործակցության շրջանակներում մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 2004թ. հուլիսի 15-ի «ԱՊՀ մասնակից–պետությունների ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի հայկական մասի Կանոնակարգը հաստատելու մասին» N1018-Ն որոշումը:

Սկսվել են աշխատանքները նորաստեղծ հայ–ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի և ԱՊՀ անդամ–պետությունների արդյունաբերական անվտանգության միջպետական խորհրդի կազմում:

1994թ. մարտի 30-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև արդյունաբերության պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների միջև արտադրական և գիտատեխնիկական կոոպերացիայի մասին» Համաձայնագրի շրջանակներում կազմվել և ՌԴ համաձայնությանն են ուղարկվել 2005թ. համար նախատեսված ցանկերը:

Զորահավաքային նախապատրաստության ոլորտում կատարվել են տնտեսության 2004թ. զորահավաքային ծրագրերի, 2004թ. ապահովագրական ֆոնդում պահպանման ենթակա փաստաթղթերի ցանկի, Նախարարության համակարգի կազմակերպությունների՝ ամրագրման ենթակա աշխատողների ցանկի մշակման աշխատանքները, աջակցություն է ցուցաբերվել համակարգի կազմակերպությունների կողմից զորահավաքային առաջադրանքների կատարման աշխատանքներին:

2.9. Արտաքին տնտեսական քաղաքականության և արտաքին տնտեսական համագործակցություն ոլորտ

Նախարարության կողմից մշակվել և սահմանված կարգով հաստատման են ներկայացվել արտերկրում ՀՀ առևտրական ներկայացուցչությունների ստեղծումն ու գործունեությունն ապահովող իրավական ակտերի նախագծեր: Մասնավորապես

առաջարկվել են փոփոխություններ և լրացումներ «Դիվանագիտական ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքներում, մշակվել և համաձայն գործող կարգի հաստատվել է «Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցիչների (կցորդների) և առևտրական ներկայացուցչությունների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

Նախապատրաստվել և կազմակերպվել է 2004թ. մայիսի 11-ին Կիևում կայացած տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովի երրորդ նիստը, որի ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ տնտեսական համագործակցության վերաբերյալ (մասնավորապես՝ գիտատեխնիկական, գյուղատնտեսության, բանկային, զբոսաշրջության և այլ ոլորտներում):

Ապահովվել է 2004թ. հոկտեմբերի 21-23-ը ք. Մինսկում կայացած տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ վեցերորդ համատեղ նիստի կազմակերպումն ու անցկացումը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակական աշխատանքներ են տարվել 2002թ. հոկտեմբերի 18-ից 19-ը Երևանում կայացած հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողովի նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակներում:

Աշխատանքներ են իրականացվել նաև հայ-իրանական, հայ-ռուսական, հայ-վրացական միջկառավարական հանձնաժողովների գործունեության արդյունքում ստորագրված արձանագրություններով ամրագրված պարտավորությունների և ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ուղղությամբ:

Մասնակցություն է ցուցաբերվել նաև հայ-հնդկական, հայ-չինական, հայ-լիբանանյան միջկառավարական համատեղ հանձնաժողովների նիստերի անցկացման աշխատանքներին:

Իրականացվել է տեղեկատվության ամփոփում, կանոնակարգում և վերլուծություն, երկկողմ առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ համապատասխան առաջարկությունների մշակում և ներկայացում ըստ երկրների: Նախապատրաստվել և ՀՀ ԱԳՆ են ներկայացվել համապատասխան տեղեկանքներ և առաջարկություններ ՀՀ և այլ երկրների միջև երկկողմ առևտրատնտեսական համագործակցության ընթացիկ իրավիճակի և զարգացման վերաբերյալ (ԱՄՆ, Ավստրիա, Կանադա, Արգենտինա, Գերմանիա, Իտալիա, Լեհաստան, Էստոնիա, Ռումինիա, Բուլղարիա, Լիբանան, Հունաստան, Իրան, ԱՄԷ, Եգիպտոս, Գանա, Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, Վրաստան, Թուրքմենստան, Ղրղզստան, Տաջիկստան և այլն):

Վրաստանի Նախագահի ՀՀ այցի, ՀՀ Նախագահի ՌԴ և Վրաստան, ՀՀ վարչապետի Ուկրաինա և ՌԴ այցերի կազմակերպման շրջանակներում նախապատրաստվել են համապատասխան տեղեկատվական նյութեր և զրույցների դրույթներ:

Աջակցություն է ցուցաբերվել սեպտեմբերի 6-7-ը ՀՀ նախագահի Լեհաստան պաշտոնական այցի շրջանակներում հայ և լեհ գործարարների բիզնես-ֆորումը արդյունավետ և պատշաճ մակարդակով անցկացմանը և սեպտեմբերի 9-11-ը Կրինիցայում կայանալիք 14-րդ միջազգային ֆորումին մասնակցությանը:

Աշխատանքներ են իրականացվել ՀՀ կազմակերպվող ցուցահանդեսներին, համաժողովներին, կազմակերպություններին աջակցության ապահովման ուղղությամբ:

Իրականացվել են աշխատանքներ՝ ուղղված օտարերկրյա պաշտոնատար անձանց և գործարարների այցելությունների կազմակերպմանը:

Փորձաքննության են ենթարկվել և գրախոսվել են ԱՊՀ շրջանակներում ազատ առևտրի գոտու լիակատար ձևավորմանն ու հետագա զարգացմանն ուղղված միջոցառումների, ինչպես նաև 2003թ. սեպտեմբերի 19-ի ԱՊՀ պետությունների ղեկավարների Խորհրդի Որոշմամբ հաստատված 2003-2010թթ. տնտեսական ոլորտում ԱՊՀ անդամ-պետությունների համագործակցության արդյունավետության զարգացմանն ու բարձրացմանն ուղղված կարևորագույն միջոցառումների իրականացման Ծրագրի վերաբերյալ փաստաթղթեր:

Քննարկվել են նաև ԱՊՀ շրջանակներում ստորագրման նախապատրաստվող 14 Համաձայնագրերի նախագծեր:

Սահմանված կարգով տարվել են աշխատանքներ՝ ուղղված «1993թ. սեպտեմբերի 24-ի Ադիսի և մետաղի միջպետական Եվրասիական միավորում ստեղծելու մասին Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մասին» Արձանագրության վավերացման ապահովմանը:

Փորձաքննության են ենթարկվել 34 միջազգային Համաձայնագրերի նախագծեր:

Սահմանված կարգով վարվել են աշխատանքներ՝ ուղղված 2 միջազգային Համաձայնագրերի վավերացման ապահովմանը:

2.11. ԱՀԿ և ԵՄ հետ համագործակցություն

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱՀԿ անդամակցությամբ ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն աշխատանքներ են իրականացվել ԱՀԿ քարտուղարության և անդամ պետությունների հետ, մշակվել և վերջիններիս քննարկմանն են ներկայացվել մի շարք փաստաթղթեր կապված՝

- ԱՀԿ նոր անդամակցող երկրների (հիմնականում առևտրային գործընկերների) աշխատանքային խմբերում ՀՀ-ն պաշտոնապես ընդգրկվելու հետ,
- ԱՀԿ TRIPS Համաձայնագրի դրույթներին ՀՀ օրենսդրության համապատասխանության հարցի քննարկման հետ,
- ԱՀԿ «Պետական Գնումների մասին» Համաձայնագրին դիտորդի կարգավիճակ ստանալու հետ,
- ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության ստեղծմանն ուղղված համապատասխան իրավական դաշտի ձևավորման նպատակով «ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացման հետ:

ԳՀՀ շրջանակներում նախապատրաստվել և անցկացվել են ՀՀ-ԵՄ Համագործակցության Կոմիտեի և Տնտեսական Հարցերով Համագործակցության Ենթակոմիտեի նիստերը համապատասխանաբար Երևանում և Բրյուսելում:

Իրականացվել են միջոցառումներ՝ ուղղված Եվրոպական Հանձնաժողովի (ԵՀ) կողմից Հայաստանին շուկայական տնտեսության կարգավիճակի շնորհմանը, ինչպես նաև 2004թ. կայացած Տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան աշխատանքային խմբի հերթական նիստերի անցկացման և հանդիպումների ընթացքում կազմված Գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ուղղությամբ:

<u>ԱՀԿ ծանուցման գործունեություն:</u> Հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ կատարվել է ՀՀ ԱՀԿ անդամակցության շրջանակներում 2004թ. համար նախատեսված բոլոր հերթական և ըստ անհրաժեշտության ծանուցումները: Համակարգման, տեղեկատվության փոխանակման և քննարկումների ընդգրկուն աշխատանք է տարվել ՀՀ-ում ԱՀԿ հարցման կետերի, ՀՀ տարբեր նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների հետ: ԱՀԿ Քարտուղարությանն են տրամադրվել ԱՀԿ ծանուցումներ 15 համաձայնագրերի առնչությամբ:

Վերամշակվել են ԱՀԿ 19 համաձայնագրերից բխող ծանուցման ենթակա փաստաթղթերի ցանկը, ծանուցումների ժամանակացույցը և ձևերը /ֆորմատը/:

Շարունակվել է համագործակցությունը Էներգետիկայի Խարտիայի Քարտուղարության հետ: Հավաքագրված տեղեկատվության ուսումնասիրման և մշակման արդյունքում պատրաստվել և «Էներգետիկ խարտիայի» Քարտուղարություն են ուղարկվել 6 ծանուցումներ:

Աշխատանքներ են իրականացվել միջազգային առևտրի գործառույթների և տեղեկատվական հոսքերի պարզեցման, համօրինակման ու միասնականացման նպատակով ՄԱԿԵՏՀ-ի կողմից մշակված և ներկայացված առաջարկությունների/խորհուրդների փաթեթի ուսումնասիրման ուղղությամբ:

Համապատասխան նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների հետ համագործակցության միջոցով ուսումնասիրվել են նաև ՀՀ-ում այդ առաջարկությունների/խորհուրդների կիրառման ծավալները, դրանց օգտագործման ընթացքում առաջացող դժվարություններն ու խոչընդոտները:

2.12. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտ (ՓՄՁ)

ՓՄՁ ոլորտում վերջին 3 տարիների ընթացքում ստեղծվել են շուրջ 20 հազար ՓՄՁ սուբյեկտներ, իսկ միայն 2004թ. ընթացքում, ըստ նախնական գնահատականների, ստեղծվել են շուրջ 8500 նոր ՓՄՁ սուբյեկտներ՝ ապահովելով ավելի քան 21 հազար նոր աշխատատեղ:

ՓՄՁ ոլորտը նշանակալի դեր է խաղում երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման գործում. ըստ նախնական գնահատականների 2004թ. ՓՄՁ ոլորտի մասնակցությունը ՀՆԱ-ում կազմել է շուրջ 40%:

ՓՄՁ ոլորտի զարգացման ու պետական աջակցության շրջանակներում իրականացվել է ՓՄՁ պետական աջակցության 2004թ. ծրագիրը, որի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 250 մլն դրամ:

ՓՄՁ պետական աջակցության 2004թ. ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունների ու որակի կառավարման համակարգերի ներդրման ուղղությամբ, ինչպես նաև գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցություն է ցուցաբերվել Երևանում և ՀՀ մարզերում գործող ավելի քան 4500 ՓՄՁ սուբյեկտի:

Ընդհանուր առմամբ ՓՄՁ պետական աջակցության 2004թ. ծրագրային միջոցառումների ավելի քան 70%-ն ուղղվել է ՀՀ մարզերի տարածաշրջաններում տնտեսական և գործարար ակտիվության բարձրացմանը:

ՓՄՁ պետական աջակցության 2004թ. ծրագրի շրջանակներում հիմնադրվել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) 3 նոր մասնաճյուղեր ՀՀ Լոռու (ք. Ստեփանավան), Արագածոտնի (ք. Ապարան) և Կոտայքի (ք. Չարենցավան) մարզերում, ինչպես նաև պահպանվել և ամրապնդվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործող Շիրակի, Տավուշի և Սյունիքի մարզային մասնաճյուղերը: 2005թ. նախատեսվում է հիմնադրել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի նոր 4 մասնաճյուղեր ՀՀ Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերում, որով կավարտվի Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի մարզային մասնաճյուղերի ցանցի ձևավորման գործընթացը:

Վերոհիշյալ ծրագրի շրջանակներում, որպես ծրագրային միջոցառում, Երևան քաղաքում հիմնադրվել է տեխնոպարկ:

ՓՄՁ զարգացման քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված ոլորտի զարգացման ծրագրեր (միջոցառումներ) իրականացնող կազմակերպությունների ներուժի կենտրոնացման նպատակով ստեղծվել է Հայաստանում ՓՄՁ աջակցման կոորդինացիոն խորհուրդ:

Մշակվել է««Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Առաջարկվող փոփոխություններն ուղղված են ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչների միասնականացմանն՝ առանց դրանց տարանջատման ըստ տնտեսական գործունեության ոլորտների:

Հիմք ընդունելով «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը և ՀՀ կառավարության կողմից ընդունված մի շարք որոշումներ ու ծրագրեր՝ մշակվել է ՓՄՁ պետական աջակցության 2005թ. ծրագրի նախագիծը: Ծրագրի իրականացման շրջանակներում առաջնայնությունը կտրվի արտադրության ոլորտում գործող, նորարարություններ և բարձր տեխնոլոգիաներ կիրառող և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին աջակցությանն, ինչպես նաև սկսնակների, երիտասարդների, կանանց և փախստականների շրջանում ձեռներեցության զարգացմանը: Սույն ծրագրի իրականացմանն ուղղված միջոցների զգալի մասը (70-80%) կուղղվի ՀՀ մարզերում գործող ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը: Դրա հետ մեկտեղ բանակցություններ են վարվում մի շարք միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ 2005թ. ընթացքում ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված համատեղ ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ:

2.13. Զբոսաշրջության ոլորտ

Զբոսաշրջային այցելությունների աճը 2001թ. սկսած պահպանվում է տարեկան 25-30%-ի սահմաններում: 2004թ. այն կազմել է 270000 զբոսաշրջիկ: Ընդլայնվել է այցելությունների աշխարհագրությունը: Ըստ հյուրանոցային տնտեսությունների տվյալների Հայաստան այցելությունների գերակշիռ մասը բաժին է ընկնում ԵՄ 30.2 %, Ամերիկա 23.3%, ԱՊՀ 22 %, Մերձավոր Արևելք 9.2 %: Ներգնա զբոսաշրջության զարգացմանը զուգահեռ դինամիկ աճ է նկատվում ներքին զբոսաշրջությունում: 9 ամիսների վիճակագրական տվյալների համաձայն ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 198 088՝ 2003թ. նույն ժամանակահատվածի համեմատ ապահովելով 12.8 % աճ:

Վերանորոգվել և շահագործման են հանձնվել նոր բարձրակարգ ենթակառուցվածքներ հանրապետության մարզերում՝ «Արաքս» հյուրանոցը Շիրակի մարզում, «Լոռի-Ավան Ձորագետ» հյուրանոցային համալիրը Լոռու մարզում, «Արմենիա» առողջարանը Ջերմուկ քաղաքում, «Ճոպանուղին» Ծաղկաձոր քաղաքում:

Զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության կարևորագույն ուղղություններից է միջազգային զբոսաշրջային շուկայում Հայաստանի ներկայացումը որպես զբոսաշրջության համար բարենպաստ երկիր՝ ակտիվ գովազդային–տեղեկատվական քարոզարշավի ծավալմամբ: Հայաստանը մասնակցել է Բեռլինի ITB, Լոնդոնի WTM 2004, ԱՊՀ երկրների Լիբանանի AWTTE 2004 արաբական շուկա - ցուցահանդեսներին:

Մշակվել և տպագրվել են ոլորտին առնչվող բազմաթիվ նյութեր, ինչպես նաև ստեղծվել են ինտերնետային էջեր, բուկլետներ տեղաբաշխման միջոցների մասին, տեղեկատուներ, զբոսաշրջային քարտեզներ, Հայաստանի ճանապարհների ատլաս և այլ գովազդատեղեկատվական նյութեր:

Կրթական ոլորտում մասնագիտացված ուսումնական բազայի գործունեության իրական նախապայմաններ են ստեղծվել բարձրագույն և միջին մասնագիտական կրթության բնագավառում:

Աշխատանքներ են իրականացվել՝ ուղղված ոլորտի օրենսդրական հիմքի ձևավորմանը՝ նպատակ ունենալով ապահովել մատուցվող ծառայությունների կայուն որակը, աջակցել ծառայությունների ընտրությանը, ինչպես նաև զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց մրցունակության բարձրացմանը: Մասնավորապես մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են զբոսաշրջության ոլորտում «Լիազոր մարմին ճանաչելու մասին», ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N 895 որոշման մեջ լրացում կատարելու մասին», «Զբոսավարի և ուղեկցորդի գործունեության լիցենզարվորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին», «Հյուրանոցային ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և որակավորման ընթացակարգը հաստատելու մասին», ««2004 թվականի ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումները, ինչպես նաև ստորագրվել են «Հայաստանի Հանրապետությունում զբոսավարի և ուղեկցորդի մասնագիտական որակավորման ստուգման թեստային հարցաշարերում ներառվող հարցերի ցանկը (ընդհանուր հարցաշարը) հաստատելու մասին», «Զբոսավարի և ուղեկցորդի որակավորման և լիցենզավորման հանձնաժողովի կանոնադրությունը, զբոսավարի և ուղեկցորդի որակավորման վկայականների ձևերը հաստատելու, որակավորաման և

լիցենզավորման հանձնաժողով ստեղծելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի հրամանները:

ՀՁԿ Գլխավոր քարտուղարի հրավերով հայկական պատվիրակությունը նոյեմբերի 10-15-ը այցելել է Մադրիդ. այցի հիմնական նպատակը ՀՁԿ-ի հետ հետագա համագործակցության շրջանակների քննարկումն ու փորձի փոխանակումն էր: Այցի շրջանակներում ստորագրվել է կողմերի միջև ոլորտի հետագա համագործակցության վերաբերյալ միջոցառումների ծրագիր:

2.14. Մտավոր սեփականության պահպանության ոլորտ

Նախարարության նախաձեռնությամբ ընդունվել են բնագավառին վերաբերող չորս օրենքներ՝ «Արտոնագրերի մասին» ««Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքները:

2004թ. ՀՀ միացավ վեց միջազգային պայմանագրերի, որոնք երկրի համար լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ չեն առաջացնում և առավել լիարժեք են դարձնում բնագավառի իրավական դաշտը:

<u>Գյուտեր և օգտակար մոդելներ:</u> 2004թ. ՀՀ մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 125 գյուտի և 19 օգտակար մոդելի հայտ, որոնցից 130-ը՝ ազգային հայտատուներից, 14-ը՝ օտարերկրյա հայտատուներից: Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի (PCT) ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության միջազգային բյուրո (ԺՆԿ) առաքվել է գյուտի 2 միջազգային հայտ: Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով ազգային հայտատուների կողմից ներկայացվել է գյուտի 1 հայտ: 141 հայտերով անցկացվել է նախնական փորձաքննություն և որոշում կայացվել հայտերի պաշտոնական հրապարակման մասին: Գործավարությունն ավարտվել է 185 հայտերով: Տրվել է 159 գյուտի արտոնագիր և 11 օգտակար մոդելի արտոնագիր:

<u>Ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ:</u> 2004թ. ազգային ընթացակարգով ստացվել են ապրանքային նշանի գրանցման 1855 հայտ (որոնցից 1546-ը՝ ազգային հայտատուներից) և ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 3 հայտ: Ապրանքային նշանների 1846 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Հետ են կանչվել 29 հայտեր, իսկ 27 հայտերով կայացվել են ապրանքային նշանի գրանցումը

մերժելու մասին որոշումներ: Գրանցվել են 695 ապրանքային եւ սպասարկման նշաններ (որոնցից 628-ը՝ ազգային հայտատուներից): Ապրանքի ծագման տեղանվան 3 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի և դրա արձանագրության շրջանակներում ՀՀ նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 1412 ծանուցում: Նախնական մերժման մասին կայացվել է 436 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 214: 28 միջազգային գրանցումներով մերժվել է ապրանքային նշանների զիջումը: Ստացվել է 41 արդյունաբերական նմուշի հայտ (որոնցից 25-ը՝ ազգային հայտատուներից): Դրանցից 23-ով որոշում է կայացվել արտոնագիր տալու մասին: Տրվել է արդյունաբերական նմուշի 23 արտոնագիր:

Ֆիրմային անվանումներ: Ներկայացվել է ֆիրմային անվանումների գրանցման 3370 հայտ: Գրանցվել է ընդամենը 3217 անվանում, մերժվել է 153-ը: "Հայ", "Հայաստան", "Հայկական" բառերի եւ դրանց թարգմանությունների օգտագործման համար տրվել է 13 թույլտվություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ: Լազերային սկավառակների վրա հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 4 համար: Իրականացվել է 197 գյուտի եւ 11 օգտակար մոդելի գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների և հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևի, ինչպես նաև 23 արդյունաբերական նմուշի նկարագրության պատրաստումը և հրապարակումը: Թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 կոմպակտ սկավառակներ, որոնցից 4 համարներում զետեղված են ՀՀ-ում արտոնագիր ստացած 197 գյուտի և 37 օգտակար մոդելի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Եվրասիական արտոնագրային գերատեսչության հետ համատեղ գործակալությունը ստեղծել է տեղեկատվական որոնման համակարգ:

Լիցենզային և զիջման պայմանագրերի գրանցում: Քննարկվել և գրանցվել են 68 պայմանագրեր, որոնցից 53-ը՝ ապրանքային նշանների զիջման մասին, 14-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին և մեկը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին:

2004թ. իրականացվող գործողությունների համար հանրապետության բյուջե է մուտքագրվել 208237,0 հազ. դրամ,

2.15. Ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման գործունեություն

2004թ. ընթացքում Նախարարության կողմից իրականացվել են աշխատանքներ, որոնք ուղղված էին ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության

հավաստման բնագավառներում օրենսդրական դաշտի հստակեցմանը և դրանց ներդաշնակեցմանը Եվրոմիությունում գործող նմանատիպ օրենքների հետ:

Մշակվել են տանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման ոլորտները կարգավորող՝ «Ստանդարտացման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին» և «Համապատասխանության գնահատման մասին» հիմնադրույթային օրենքների նախագծերը և ընդունվել Ազգային Ժողովի կողմից 2004թ. մայիսին: Օրենքները ներդաշնակ և համահունչ են միջազգային պահանջներին: Խոր վերլուծության են ենթարկվել և հաշվի առնվել տնտեսության զարգացման և առևտրում խոչընդոտների վերացման հետ կապված հարցերը: Հստակ կանոնակարգվել են ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության հավաստման ոլորտների գործընթացները: Ընդունված օրենքներով առաջին անգամ ստեղծվել են «Ստանդարտների ազգային ինստիտուտ» և «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ:

Ելնելով ՀՀ օրենքների պահանջներից՝ մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է վերոհիշյալ օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը:

<u>Ստանդարտացման բնագավառ:</u> Հաշվետու ժամանակաշրջանում հայրենական արտադրանքի և ծառայությունների որակի և մրցունակության բարձրացման նպատակով ընդունվել և պետական գրանցում են ստացել 300-ից ավելի ազգային ստանդարտներ, այդ թվում՝

- մշակվել և ընդունվել են 32 ՀՀ ստանդարտներ, որոնք ամբողջովին ներդաշնակեցված են գործող միջազգային ստանդարտներին (ISO, EN)
- գործողության մեջ են դրվել 200-ից ավելի միջպետական ստանդարտներ, որոնք նույնպես ներդաշնակեցված են միջազգային ստանդարտներին,
- ուղղակի գործողության մեջ են դրվել 44 միջազգային ստանդարտներ:

Ընդունվել և գործողության մեջ են դրվել 2 դասակարգիչ՝ «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների» և «Հիվանդությունների»:

Նշված աշխատանքներն ուղեկցվել են տեղեկատվության ապահովմամբ, մասնավորապես հրապարակվել է 13 ստանդարտների կատալոգներ, տեղեկատուներ:

ԱՀԿ անդամագրվելուց հետո, ստանձնած պարտավորությունները կատարելու նպատակով, լայնածավալ աշխատանքներ են ծավալվել ՀՀ-ում արտադրանքի, ծառայությունների անվտանգության պահանջները սահմանող տեխնիկական կանոնակարգերի մշակման ուղղությամբ:

Նախարարության կողմից մշակվել են արտադրանքի և ծառայությունների անվտանգության պահանջները սահմանող 10 տեխնիկական կանոնակարգերի նախագծեր: Ընդ որում՝ 6 տեխնիկական կանոնակարգեր 2004թ. ընթացքում ընդունվել են ՀՀ կառավարության կողմից և ուժի մեջ են մտնելու 2005թ. մայիս ամսին:

Համաձայն ՀՀ կառավարության 2000 թվականի հունվարի 11-ի N 9 որոշման տեխնիկական կանոնակարգերի նախագծերի ընդունման նախապատրաստելու մասին տեղեկատվությունը ծանուցվում է մամուլով և ԱՀԿ ծանուցման կենտրոնի միջոցով: Տեխնիկական կանոնակարգերի մշակման համար հիմք են ընդունվել միջազգային կամ դրանց հետ ներդաշնակեցված ազգային ստանդարտներ: Կատարվել են 2005 թվականին նախարարությունների և այլ գերատեսչությունների կողմից գնման ենթակա ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ամփոփ անվանացանկերի կոդավորումը, համակարգումը (ավելի քան 70 ցանկ) և ներկայացվել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:

<u>Չափագիտության բնագավառ:</u> 2004թ. չափումների միասնականության ապահովման նպատակով իրականացվել է 335 չափման միջոցի տեսակի հաստատում, չափման միջոցների 374 պետական փորձարկում, տրվել է 1 չափման միջոցի արտադրության և նորոգման լիցենզիա: Ստուգաչափման են ենթարկվել օրենսդրորեն կանոնակարգվող ոլորտներում շահագործման մեջ գտնվող, ՀՀ արտադրված, ՀՀ ներմուծված և նորոգումից հետո 176 673 միավոր չափման միջոց:

Փորձաքննության են ենթարկվել Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի Հանրապետության չափագիտության ազգային մարմինների կողմից փոխճանաչման համար ներկայացված յոթ տեսակի չափման միջոցների վերաբերյալ փաստաթղթեր և ընդունվել որոշում այդ չափման միջոցների տեսակները ՀՀ-ում ճանաչելու մասին՝ գրանցելով պետգրանցամատյանում:

Կատարվել են հետազոտական աշխատանքներ թունավոր և պայթյունավտանգ գազերի անալիզատորների ստեղծման ուղղությամբ: Ստեղծվել են վերջիններիս աշխատանքային նմուշները:

Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ՄԱԳԱՏԷ) հետ իրականացվել են աշխատանքներ և ձեռք բերվել պայմանավորվածություն 2005թ. Չափագիտության ազգային ինստիտուտին Cs137 իզոտոպով ապահովելու և մի շարք ստուգաչափական սարքավորումներով՝ առողջապահության ոլորտում շահագործվող չափման միջոցների չափագիտական սպասարկումն իրականացնելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում համագործակցվել է Ռուսաստանի Դաշնության “ԹիխժՉ”, Սլովակիայի «Sensus Metering Systems», ԱՄՆ-ի «Emerson Process Management» ֆիրմաների հետ ծախսաչափային հաշվիչների ստուգաչափումը ՀՀ-ում կազմակերպելու գործում:

<u>Համապատասխանության հավաստման բնագավառ:</u> «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով նախարարությունը կազմակերպել է սեմինարներ սերտիֆիկացման բոլոր հավատարմագրված մարմինների

համար, որտեղ ներկայացվել են նոր օրենքի պահանջները և դրանից բխող բոլոր իրավական ակտերի ցանկը, գործողության ոլորտը և իրականացման պայմանները:

ՀՀ կառավարության կողմից ստեղծվել և հաստատվել է հավատարմագրման խորհրդի նոր կազմը: Հավատարմագրվել են 17 սերտիֆիկացման մարմիններ և 38 փորձարկման լաբորատորիա:

2.16. Որակի վերահսկողություն

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ որակի տեսչության կողմից իրականացվել են ստուգումներ 2249 տնտեսավարող սուբյեկտների մոտ, 546-ում հայտնաբերվել են 593 խախտումներ, 12 տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներ խոչնդոտել են ստուգումների իրականացմանը:

Ստուգումների արդյունքների և իրավապահ մարմինների նյութերի հիման վրա տրվել են կարգադրագրեր թերությունները վերացնելու վերաբերյալ, խախտումներ թույլ տված պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել են վարչական տուգանքներ 26.7 մլն դրամի չափով:

2004թ. մայիսին Աստանայում և դեկտեմբերին Մոսկվայում համապատասխանաբար ՄՊԽ-ի 25-րդ և 26-րդ նիստերի անցկացման ընթացքում փորձի փոխանակման նպատակով ձեռք են բերվել Բելառուսի, Ռուսաստանի և Ղազախստանի ազգային մարմինների նորմատիվ փաստաթղթերը տարբեր ոլորտներում վերահսկողության իրականացման վերաբերյալ, բանակցություններ են տարվել նավթամթերքի շարժական լաբորատորիայի ձեռք բերման ուղղությամբ:

2.17. Տնտեսության մեջ աշխատանքների անվտանգ կազմակերպման հսկողություն

Հաշվետու ժամանակաշրջանում «Հայլեռտեխհսկողություն» տեսչության հսկողությանը ենթակա են եղել 2833 կազմակերպություններ՝ 17919 օբյեկտներով: Կատարվել են 3058 համալիր, նպատակային և օպերատիվ տեխնիկական ուսումնասիրություններ և ստուգումներ, որոնց արդյունքում բացահայտվել և արձանագրվել են տեխնիկական անվտանգության ապահովման նորմերի ու կանոնների 4750 խախտումներ և թերություններ: Դրանցից վերացվել են թվով 3383-ը: Մեկ և ավելի օրից դադարեցվել են աշխատանքները 1318 օբյեկտներում: Թվով 79 պաշտոնատար և պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել է 291700 դրամ ընդհանուր գումարով տուգանք, իսկ 22-ը ազատվել կամ իջեցվել են պաշտոնից: Այս ընթացքում իրավապահ մարմիններին ներկայացվել է 35 գործ: Տեսչության աշխատակիցների կողմից ատեստավորվել, գիտելիքների և հրահանգների պահանջների

իմացության ստուգումներ են անցել 1911 մասնագետներ, որոնցից 26-ը իրենց մասնագիտական գիտելիքներով և անվտանգության տեխնիկայի կանոնների իմացությամբ չեն համապատասխանել ներկայացվող պահանջներին:

Հաշվետու ժամանակաշրջանում տեղի են ունեցել արտադրության հետ կապված մահացու ելքով 12 դժբախտ դեպքեր, որոնց ժամանակ զոհվել է 16 մարդ և ծանր ելքով 7 դժբախտ դեպքեր, որոնց ժամանակ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել 13 մարդ:

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմված հանձնաժողովի կազմում տեսչությունը մասնակցել է հեղուկ գազի շարժական լցավորման կետերի անվտանգ շահագործումն ապահովելու ուղղությամբ իրականացվող աշխատանքների ստուգման գործընթացին, անօրինական աշխատող լցավորման կետերի գործունեության դադարեցման գործընթացին և կազմել համապատասխան տեղեկանք՝ ելնելով ուսումնասիրության արդյունքներից:

Տեսչությունը ծավալուն աշխատանք է կատարել հանրապետության տարածքում բազմաբնակարան շենքերի գազամատակարարման վերականգնման և գազաֆիկացման ուղղությամբ, կատարվել են նախագծերի գրանցում, իրականացվել է նախահսկողություն այդ աշխատանքների նկատմամբ, մասնակցել է շահագործումն ընդունող հանձնաժողովի աշխատանքներին: «Հայռուսգազարդ»-ի և տեսչության մասնագետները նախապատրաստում են բնագավառը կանոնակարգող հինգ նորմատիվ-տեխնիկական ակտեր: Տեսչությունը մասնակցել է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից գազաբաշխիչ համակարգերի շինարարական նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի մշակմանը:

Հավելված 1

Համառոտ տվյալներ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համակարգի 2004թ. ֆինանսատնտեսական գործունեության մասին

2004թ. գործունեության արդյունքում Նախարարության համակարգի ընկերությունների կողմից արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացման ծավալը կազմել է 57.9 մլրդ. դրամ՝ նախորդ տարվա 35.2 մլրդ. դրամի համեմատ (բերված բոլոր ցուցանիշները համադրելի են): Նման աճը հնարավորություն է տվել ընկերություններին բարելավել իրենց ֆինանսական վիճակը:

Նախարարության համակարգի ընկերությունների (շահույթով աշխատողների) կողմից ստացված շահույթը կազմել է 27.6 մլրդ. դրամ նախորդ տարվա 15.3 մլրդ. դրամի համեմատ, վնասը (վնասով աշխատողների) կազմել է 1.0 մլրդ. դրամ նախորդ տարվա 1.4 մլրդ. դրամի համեմատ:

Ընկերությունների կողմից բյուջե է փոխանցվել 11.0 մլրդ. դրամ բոլոր հարկերի գծով, նախորդ տարվա 2.2 մլրդ. դրամի համեմատ: Բյուջեի նկատմամբ պարտավորությունների մնացորդը առ 01.01.2004թ. կազմել է 2.02 մլրդ. դրամ, այդ թվում՝ տույժ տուգանքերը 0.24 մլրդ. դրամ, իսկ առ 01.01.2005թ. ՝ 0.84 մլրդ. դրամ, այդ թվում՝ տույժ տուգանքերը 0.28 մլրդ. դրամ:

01.01.2005թ. դրությամբ բյուջեի նկատմամբ պարտավորությունները, ըստ հարկատեսակների, նախնական հաշվարկներով, կունենան հետևյալ տեսքը՝

մլն. դրամ

Ցուցանիշի անվանումը	01.01.2004թ.	01.01.2005թ.
Ավելացված արժեքի հարկ	62.2	234.6
Շահութահարկ	1647.9	35.7
Եկամտահարկ	47.4	27.8
Գույքահարկ	10.7	16.3
Հողի հարկ	11.4	10.9
Տույժեր	240.3	284.0
Տուգանքներ	0.6	0.1
ԲնապահՊանման վճարումներ	0.1	1.7
Բնօգտագործման վճարումներ	-	231.8
Այլ պարտադիր վճարներ	0.5	0.2
Ընդամենը	2021.1	843.1

2004թ. սոցիալական ապահովագրության գծով ընկերությունների կողմից տարեկան վճարումը կազմել է 0.84 մլրդ. դրամ, նախորդ տարվա 0.64 մլրդ. դրամի համեմատ:

2004թ. ընթացքում հաշվարկվել և վճարվել է շուրջ 4.5 մլրդ. դրամ աշխատավարձ:

Նախարարության համակարգի ընկերությունները 2000թ. հունվարի 1-ից սկսած իրենց ֆինանսական հաշվետվությունները կազմում ու ներկայացնում են ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների, նոր հաշվային պլանի և ֆինանսական հաշվետվությունների լրամշակված ձևերի, ինչպես նաև վերջիններիս չհակասող իրավական ակտերին համապատասխան:

2004թ. Նախարարության կողմից իրականացվել է պետական բյուջեով նախատեսված ներքոհիշյալ ծրագրերի ֆինանսավորում ՝

հազ. դրամ

- Նախարարության աշխատակազմի պահպանման ծախսեր 424165.0
- Երևանի ֆիզիկայի ինստիտուտ 60000.0
- Ռադիոֆիզիկայի ¶ÐÆ 84870.0

այդ թվում՝ «Արև-100» շինարարության 50000.0

- Գիտալրատվական կենտրոն 12496.0
- Գիտատեխնիկական գրադարան 66677.9
- Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրական պետական աջակցության ծրագիր 234000.0
- ՀՀ զբոսաշրջիկության զարգացման պետական ծրագիր 20000.0
- «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ 15744.5
- ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 56824.3

Հավելված 2

Նախարարության փաստաթղթաշրջանառությունը

Հաշվետու ժամանակաշրջանում Նախարարությունում հաշվառման են վերցվել 8075 պաշտոնական գրություններ, 216 առաջարկություններ, քաղաքացիների դիմում-բողոքներ (որից 20 առաջարկություններ, 178 դիմումներ և 18 բողոքներ), հաշվառվել է 223 հրաման: Մտից 8075 գրություններից 148-ը ստացվել են ՀՀ Նախագահի աշխատակազմից, (որից 45-ը վերցվել են հսկողության) 18-ը՝ ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմից (8-ը վերցվել են հսկողության), 13-ը՝ ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմից (որից 6-ը վերցվել են հսկողության), 1292-ը՝ ՀՀ կառավարության աշխատակազմից, որոնցից 297-ը ՀՀ կառավարության որոշումներ են (որից 85-ը վերցվել են հսկողության), 103-ը ՀՀ վարչապետի որոշումներ (որից 30-ը վերցվել են հսկողության), 892-ը ՀՀ կառավարության նիստերի արձանագրությունների քաղվածքներ, հանձնարարականներ (որից 600-ը վերցվել են հսկողության), 1825-ը ՀՀ նախարարությունների աշխատակազմերից և այլ գրություններ:

2004 թվականին Նախարարությունից առաքվել են 3590 ելից գրություն, որից՝ 1929-ը՝ նախարարի, 1661-ը՝ տեղակալների ստորագրությամբ:

Հավելված 3

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Նպատակը	Կատարողը	Ժամկետը	Ֆինանսա-կան ապա-հովումը
1	*2*	*3*	*4*	*5*
1. «Տեխնիկական կանոնակարգերի մշակման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Առևտրի համաշխարհային կազմակերպու-թյան «Առևտրում տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրի պահանջների կատարում, «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	փետրվարի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
2. «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Աջակցել հավասար մրցակցային միջավայրի ձևավորման և թեթև արդյունաբերության ոլորտում ներդրումային ծրագրերի խթանման աշխատանքներին	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	փետրվարի 2-րդ տասնօրյակ	
3. «Հայաստանի Հանրապետության ստանդարտացման 2005 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Տեխնիկական կանոնակարգերի պարտադիր պահանջների կատարումն ապահովող միջազգային, եվրոպական ստանդարտների ընդունում, ՀՀ ստանդարտների մշակում, «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 15 հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	փետրվարի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
4. «Ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Հռչակել և օրենսդրորեն ամրագրել հավասար, ոչ խտրական և կանխատեսելի պայմաններ, թե օտարերկրյա և թե տեղական ներդրողների համար: «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ գործող օրենքում առկա թյուրմեկնաբանություններ և տարընթերցումներ հարուցող դրույթերի լրամշակում: Ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը միջազգային չափանիշներին և լավագույն փորձին համապատասխանեցում:	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	մարտի 3-րդ տասնօրյակ	
5. «Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության» Հայեցակարգի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Միասնական ներդրումային քաղաքականու-թյան իրականացման իրավական հիմքերի, գերակայությունների, օժանդակության եղանակ-ների ու մեխանիզմների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրի և վարկանիշի շարունակական բարելավման ուղղությունների սահմանում:	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	մարտի 3-րդ տասնօրյակ	
6. «Մտավոր սեփականության բնագա-վառում պետական կարգավորման հայեցակարգ»-ի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Բարձրացնել մտավոր սեփականության պահպանության արդյունավետությունը և ապահովել մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման մեխանիզմները, ՀՀ կառավարության 17.06.2003թ. N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.6 կետի 4-րդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	մարտի 3-րդ տասնօրյակ	
7. «Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունում (ԱՀԿ) ՀՀ մշտական ներկայացուցչի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ԱՀԿ ընթացիկ աշխատանքային /բանակցային/ գործընթացին լիարժեք մասնակցություն	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
8. «Առևտրի և ծառայությունների ոլորտում լիազոր մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	մարտի 3-րդ տասնօրյակ	
9. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու	«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի պահանաջների կատարման նկատմամբ վերահսկողության ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման	հունիսի 2-րդ տասնօրյակ	

մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը		նախարարություն, ՀՀ արդարադատու-թյան նախարարություն		
10. «Կենցաղային ծառայությունների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, ՀՀ կառավարութ-յանն առընթեր հարկային պետական ծառայություն	հուլիսի 3-րդ տասնօրյակ	
11. «Ներքին շուկայի պաշտպանության միջոցառումների կիրառման նպատակով խորհրդակցու-թյունների անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ներքին շուկայի պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կիրարկման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	
12. «Մտավոր սեփականության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Մտավոր սեփականության իրավական դաշտի կատարելագործում, ՀՀ կառավարության 17.06.2003թ. N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.6 կետի 4-րդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	
13. «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ-ում ինովացիոն գործունեության համար համապատասխան իրավական դաշտի ստեղծում, ՀՀ կառավարության 17.06.2003թ. N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.1 կետի 8-րդ պարբերության պահանջի կատարման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	
14. ՀՀ-ԵՄ Գործընկերության և Համագործակցության Համաձայնագրի (ԳՀՀ) շրջանակներում ՀՀ-ԵՄ հա-մագործակցության կոմիտեի հերթական նիստի նախապատրաստում և անցկացում	ՀՀ-ԵՄ Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (ԳՀՀ) պատշաճ իրականացում, ՀՀ-ԵՄ տնտեսական համագործակցության խորացում և ընդլայնում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
15. ՀՀ-ԵՄ Գործընկերության և Համագործակցության Համաձայնագրի (ԳՀՀ) շրջանակներում ՀՀ-ԵՄ տնտեսական և իրավական հարցերով համա-գործակցության ենթակոմիտեի հերթական նիստի նախապա-տրաստում և անցկացում	ՀՀ-ԵՄ Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (ԳՀՀ) պատշաճ իրականացում, ՀՀ-ԵՄ տնտեսական համագործակցության խորացում և ընդլայնում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
16. «Ջենքի, զինամթերքի, պայթուցիկ նյութերի վաճառքի առանձնահատ-կությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, ՀՀ ոստիկանություն	հոկտեմբերի 1-ին տասնօրյակ	
17. «Թունաքիմիկատների և պարար-տանյութերի վաճառքի առանձնա-հատկությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, ՀՀ գյուղա-տնտեսության նախարարություն,	հոկտեմբերի 2-ին տասնօրյակ	
18. «Վերելակների և դրանց շահագործման անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրարկման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
19. «Կշռածրարման, վաճառքի և ներմուծման ժամանակ ցանկացած տիպի փաթեթվածքներում չափածրարված ապրանքների քանակին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ	«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրարկման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե

կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը				
20. «Մեքենաշինական արտադրանքի անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրարկման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
21. «Հայաստանի Հանրապետու-թյունում գործող օտարերկրյա դիվանագիտական անձնակազմի սպասարկման խանութներում վաճառքի և սպասարկման առանձնահատկությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների կատարման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ կառավարութ-յանն առընթեր հարկային պետական ծառայություն	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	
22. «Փոքր և միջին ձեռնարկատիրու-թյանը պետական աջակցության 2006թ. ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի կատարման ապահովում, ՀՀ կառավարության 17.06.2003թ. N 691-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրի 4.2.2 կետի 11, 13 պարբերությունների պահանջների կատարման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
23. «Սննդի ապահովման ծառայություններին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրարկման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
24. «Վարսավիրանոցների և գեղեցկության սրահների ծառայութ-յուններին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի կիրարկման ապահովում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
25. «Հակագնագցման իմաստով ապրանքի սովորական արժեքի որոշման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ոլորտը կարգավորող օրենսդրության ամբողջականացում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	
26. «ՀՀ կայուն տնտեսական զարգացման ռազմավարության իրականացման գործողությունների պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կայուն տնտեսական զարգացման ապահովմանն ուղղված գործողությունների ամրագրում	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	ՀՀ կայուն տնտեսական զարգացման ռազմավարու-թյան հաստատումից հետո 3-ամսյա ժամկետում	
27. «Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում էլեկտրոնա-յին փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառ-ման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 11-ի առաջին պարբերություն	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո 5 ամսվա ընթացքում	
28. «Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրումը իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ	«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 15-ի առաջին պարբերություն	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի ընդունումից	

կառավարություն ներկայացնելը			հետո 5 ամսվա ընթացքում	
29. «Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 15-ի (ա) ենթակետ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո 5 ամսվա ընթացքում	
30. «Էլեկտրոնային թվային ստորա-գրության հավատարմագրված հավաստագրման կենտրոնների մատյանը (ռեգիստրը) վարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 15-ի (բ) ենթակետ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո 5 ամսվա ընթացքում	